ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

26.09.2025թ.
Ժամը 10^{15}

Ի գիտություն՝ քանի որ հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ՊՆ ԳԿՎ ՏԱԳՎ բաժնի 2-րդ բաժանմունքի պետ՝ Լ. Թունյանը բացակայում է նիստից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ նիստը նախագահում է ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿԶՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ՝ Ա. Ասատրյանը:

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿԶՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ՝ Ա. Ասատրյան,

ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿԶՏԱ բաժնի ավագ սպա՝ Խ. Երիցյան,

ՀՀ ՊՆ ԳԿՎ ՏԱԳՎ բաժնի 2-րդ բաժանմունքի գլխավոր մասնագետ՝ Ռ. Զադոյան:

Բացակայում է՝

ՀՀ ՊՆ ԳԿՎ ՏԱԳՎ բաժնի 2-րդ բաժանմունքի պետ՝ Լ. Թունյանը:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պողոսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Պողոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Պողոսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ
2	«ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ

յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Պողոսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են՝

Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող հայտի ապահովումը «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է կանխիկ փողի ձևով, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի և հիմք ընդունելով ՀՀ Ֆինանսների Նախարության N 03/12-1/2884-2024 գրությունը, 22.09.2025թ. հարցում է կատարվել ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչություն՝ «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը հավաստող փաստաթղթի իսկությունը ստուգելու նպատակով: Հաշվի առնելով ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության ՊՆ/520-3102 առ. 24.09.2025թ. գրությունը, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը համապատասխանում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

2.3 Բոլոր մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող, բացառությամբ «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես՝ «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած Հավելված 1-ում նշված է՝ «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգի 1 (մեկ) չափաբաժնին, սակայն Հավելված 1.1-ում ընթացակարգի ծածկագիրը նշված է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/7» և ներկայացված են՝ չափաբաժնի համարը 3 և չափաբաժնի համարը 4 նշված, թվով երկու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրեր, քանի որ սույն ընթացակարգի ծածկագիրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» է և ընթացակարգը բաղկացած է մեկ չափաբաժնից, անհրաժեշտ է Հավելված 1.1-ը համապատասխանեցնել ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) և Հավելված 1.1-ը ներկայացնել նշելով ընթացակարգի ճիշտ ծածկագիրը և չափաբաժնի համարը: Ինչպես նաև, «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած Հավելված 1.1-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, միաժամանակ, «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը՝ հավելված 1-ը և հավելված 2-ը, էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել են Բեգլարյան Էդգարի կողմից, իսկ որպես ընկերության տնօրեն նշված է՝ Անի Սարգսյան, սակայն հայտով ներկայացված փաստաթղթերում բացակայում է «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից լիազորագիր՝ տրված Բեգլարյան Էդգարին, հայտով ներկայացված փաստաթղթերը՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու իրավասության վերաբերյալ: Միևնույն ժամանակ «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած Հավելված 1.1-ում, առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած 2-րդ հերթական համարով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը թերի է, բացակայում են պահանջվող մի շարք տեխնիկական հատկանիշները բնութագրող ցուցանիշներ՝ Տեսանյութի կոդեկներ (հրավերով պահանջվող՝ VP8, H.264, H.263+, H.263, H.261h), Զանգերի՝ լրտեսում, տեսազանգ/ 3-կողմանի կոնֆերանս զանգ Հետևեք ինձ/Հետ զանգ/DISA/ Firewall՝ հիմնված iptables-ի վրա, Օպցիոնալ մոդուլ՝ 1PRI, Անալոգ ելքերի քանակը (հրավերով պահանջվող 3 հատ), 16 x RJ11 FXS Ports, 1 x RJ21 ելք/ Հեռահողորդակցության տեխնիկական արձանագրություն, Աուդիո կոդեկ G.728 տեխնիկական պարամետրերի մասին տեղեկատվությունը: Միաժամանակ, քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգը բաղկացած է մեկ չափաբաժնից, որպեսզի ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու առաջարկվող ապրանքի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, անհրաժեշտ է Հավելված 1.1-ով ներկայացնել առաջարկվող ապրանքի մեկ տեխնիկական բնութագիր:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 26.09.2025թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

30.09.2025թ. ժամը 11:30 շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Պողոսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ Հ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	գնման գինը (ՀՀ դրամ) (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը)	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
					անվանումները	գնային առաջարկները		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
3	հեռախոսային կայաններ	հատ	27	26 730 000	«ԱՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ	22 140 000	4 428 000	26 568 000
					«ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	21 610 000	4 322 000	25 932 000

2.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են:

2.3 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն կազմակերպվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Գ. Պողոսյան)

4.1 30.09.2025թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ, ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչվեց «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Պողոսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-1/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող՝ Ա. Ասատրյան

Գնահատող՝ Խ. Երիցյան

Գնահատող՝ Ռ. Զաղոյան

Գնումները համակարգող՝ Գ. Պողոսյան